ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 55-Ա

ԱԼԻՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ՊԱՏՐՈՆ /ՕԳՆԱԿԱՆ/ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի դրույթով և հիմք ընդունելով Ալավերդու համայնքապետարանի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով»-ի 11.11.2022 թվականի արձանագրությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի համայնքի Աքորի գյուղի 3 փ., 2-րդ նրբ., 10 հասցեի բնակիչ Ալինա Գևորգի Պետրոսյանին նշանակել քաղաքացի Ստյոպա Եղիշի Ավետիքյանի /ծնված՝ 11.09.1967թ./ պատրոն /օգնական/:
2. Ալինա Գևորգի Պետրոսյանին իրավունք վերապահել ստանալու և տնօրինելու Ստյոպա Եղիշի Ավետիքյանին հասանելիք թոշակը, նպաստը և դրամական այլ մուտքերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 11
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 56-Ա

06-002-0038-0064 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ԿԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՑԱԽԱՆՈՑԻ ԵՎ 0.01668 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՇԱԳԾՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿՈՎ ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 30.09.2022Թ. N 331-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 05.01.2022թ. N 13-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Կարինե Մարկոսի Սարգսյանի դիմումը, անձնագրի պատճենը, ժառանգության իրավունքի վկայագիրը, 24.03.1989թ. տեխնիկական անձնագիրը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինությունների հատակագծերը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

1. Ալավերդի քաղաքի Կոմերիտմիության փողոց N 70 հասցեում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկի փողոց, 73 բնակելի տուն փոստային հասցե:
2. Վերականգնել Կարինե Մարկոսի Սարգսյանին ժառանգության իրավուքով պատկանող, համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Զորավար Անդրանիկի փողոց, 73 հասցեում գտնվող բնակելի տան, ցախանոցի և 0.01668 հա

մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը, սեփականության իրավունքը:

3. Նշված հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, 2012 թվականին կառուցված՝ բնակելի տունը, ցախանոցը Հայաստանի Հանրապետության 50-Ն օրենքով համարել Կարինե Մարկոսի Սարգսյանի սեփականությունը:
4. Հողամասում առկա են 40.6 քմ ընդհանուր արտաքին մակերեսով /39.7 քմ ներքին մակերեսով/ ինքնակամ կառուցված շինություններ և կատարված ձևափոխություններ, որոնք ենթակա են գրանցման նշագծված տարբերակով, որպես ինքնակամ կառույց:
5. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
6. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
7. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
8. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 30.09.2022թ. «06-002-0038-0064 ծածկագրում գտնվող, Կարինե Մարկոսի Սարգսյանին ժառանգության իրավունքով պատկանող բնակելի տան, ցախանոցի և 0.01668 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասում ինքնակամ կառուցված շինությունները, կատարված ձևափոխություններն ուղղակի վաճառքով օտարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 331-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 57-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 10.08.2022Թ. N 282-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

Ալավերդի համայնքի ղեկավարի 10.08.2022թ. «Ինքնակամ կառուցված բնակելի գործառնական նշանակության նկուղով ավտոտնակի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու, օրինականացնելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 282-Ա որոշման 3-րդ կետը կարդալ հետևյալ խմբագրությամբ.

«Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասի 2/27 շենքի հյուսիսային մասում գտնվող, բնակելի նշանակության նկուղով ավտոտնակին տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 5 ավտոտնակ փոստային հասցե»:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 58-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Արթուր Սեյրանի Լալայանի լիազորած անձ Հակոբ Թելմանի Հակոբյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 2279965 վկայականը, ժառանգության իրավունքի վկայագրերը, լիազորագիրը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Արթուր Սեյրանի Լալայանին ժառանգության իրավունքով պատկանող՝ Սանահին կայարան թաղամաս 86 ա հասցեում գտնվող բնակելի տանը, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին կայարան թաղամաս, 82 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 59-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Մանուշակ Հմայակի Մակինյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1381690 վկայականը, Կադաստրի կոմիտեի տվյալների միասնական էլեկտրոնային բազայից առցանց եղանակով ստացված տեղեկանքը անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված իրավունքների վերաբերյալ, Հաղպատ գյուղի վարչական ղեկավարի կողմից 10.11.2022թ. տրված N 1345 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Մանուշակ Հմայակի Մակինյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզի Հաղպատ գյուղում գտնվող, 0.1155 հա մակերեսով տնամերձին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 19-րդ փողոց, 1-ին նրբանցք, 9 հողամաս փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 60-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Էդվարդ Գևորգի Իսագուլյանի դիմումը, անձնագրի պատճենը, սեփականության իրավունքի N 1789650 վկայականը, Արդվի համայնքի ղեկավարի 17.08.2010թ. N 05-Ա որոշման քաղվածքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ***՝

Էդվարդ Գևորգի Իսագուլյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Լոռու մարզ, Արդվու համայնքում գտնվող տնամերձին և բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Արդվի, 1-ին փողոց, 20/1 բնակելի տուն փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 61-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015թ. N 596-Ն որոշումով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Արմեն Սարգսյանի դիմումը, անձնագրի պատճենը, աշխատանքային նախագիծը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Արմեն Սարգսյանին տրամադրել շինարարության թույլտվություն և թույլատրել կատարելու համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 7-րդ փողոց, 18 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում մառանի կառուցման շինարարական աշխատանքները:
2. Շինարարական աշխատանքներն սկսել լիցենզավորված կազմակերպության կողմից տրամադրված, համայնքի ղեկավարի հետ համաձայնեցված, նախագծա-նախահաշվային փաստաթղթերի և համայնքապետարանի կողմից տրամադրված շին. թույլտվության առկայության դեպքում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ**

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 62-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 06.04.2022Թ. N 134-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտեր իմասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը **որոշում եմ՝**

Ալավերդի համայնքի ղեկավարի 06.04.2022թ. «06-022-0101-0002 ծածկագրում գտնվող, ժառանգության իրավունքով պատկանող, 0.0564 հա մակերեսով տնամերձ հողամասի հողհատկացման հիմքերը վերականգնելու, հողամասում կառուցված անավարտ բնակելի տունը նշագծված տարբերակով գրանցելու, ավել օգտագործվող 0.00181 հա մակերեսով սահմանազատված հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» N 134-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. որոշման 3-րդ կետում ավելացնել «կադաստրի կոմիտեում 2022CTTC9 ծածկագրով հաշվառված» բառերը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 63-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՋՐԱՎԱԶԱՆԻ, ԾԱԾԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 08.09.2022Թ.N 314-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 731-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումներով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 33-րդ, 34-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 05.01.2022թ. N 13-Ն որոշումով, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված բաց պատշգամբով բնակելի տունը, ջրավազանը, ծածկը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ, պահպանում են քաղաքաշինական նորմերը, հիմք ընդունելով «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» ՍՊ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության կողմից տրված թիվ 0-50 տեղեկանքը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևմտյան մասում գտնվող, ինքնակամ կառուցված, 15.6 քմ արտաքին մակերեսով (12.0 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով բնակելի տան, 17.1 քմ արտաքին մակերեսով (13.0 քմ ներքին մակերեսով) ջրավազանի, 7.30 քմ մակերեսով ծածկի նկատմամբ ճանաչել Ալավերդի համայնքի սեփականության իրավունքը:
2. Օրինականացնել Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևմտյան մասում գտնվող, 2015թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2022SAPLLT ծածկագրով հաշվառված, 15.6 քմ արտաքին մակերեսով (12.0 քմ ներքին մակերեսով) բաց պատշգամբով բնակելի տունը, 17.1 քմ արտաքին մակերեսով

(13.0 քմ ներքին մակերեսով) ջրավազանը, 7.30 քմ մակերեսով ծածկը՝ սպասարկման համար զբաղեցրած 0.04 հա մակերեսով հողամասով:

3. Ալավերդի քաղաքի Ջրավազան փողոցի արևմտյան մասում գտնվող բնակելի տանը տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Ջրավազան փողոց, 118 բնակելի տուն փոստային հասցե:
4. Բաց պատշգամբով բնակելի տան զբաղեցրած 0.04 հա մակերեսով հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
5. Համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. սահմանված ժամկետում դիմել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ալավերդու սպասարկման գրասենյակին՝ բաց պատշգամբով բնակելի տան, ջրավազանի և ծածկի նկատմամբ Ալավերդի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
6. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնին. ինքնակամ կառույցն իրականացրած անձին՝ Անժելա Ալեքսիի Բոշյանին օրինականացված բաց պատշգամբով բնակելի տունը, ջրավազանը, ծածկը և սպասարկման համար զբաղեցրած հողամասն ուղղակի վաճառքով ձեռք բերելու մասին ներկայացնել գնման նախապատվության գրավոր առաջարկություն:
7. Ուժը կորցրած ճանաչել Ալավերդի համայնքի ղեկավարի 08.09.2022թ «06-002-0028-0001 ծածկագրի մեջ գտնվող բաց պատշգամբով բնակելի տունը, ծածկը, ջրավազանը և 0.04 հա մակերեսով հողամասն օրենքի ուժով սեփական համարելու, փոստային հասցե տրամադրելու մասին» 314-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱՋՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 64-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով ***որոշում եմ՝***

2022 թվականի նոյեմբերի 22-ին, ժամը 15.00-ին գումարել Ալավերդի համայնքի ավագանու հերթական նիստը համայնքապետարանի վարչական շենքում՝ հետևյալ օրակարգով.

1. Ալավերդի համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 22-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
2. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի 2022 թվականի բյուջեի մեջ փոփոխություններ կատարելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)
3. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքում 2023 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
   (Զեկ. Ա. Թամազյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ

2022թ. նոյեմբերի 14
ք. Ալավերդի